



« 04 » փետրվարի 2015թ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 26-Ի N 363 և 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 14-Ի
N 290 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 16-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի փետրվարի 4-ի N 01/393-15 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շահառու ճանաչված ընտանիքների ցուցակները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2012 թվականի հունիսի 15-ի N 124 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N363 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի 1-ին կետով հաստատված N1 հավելվածի 354-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

354	3ս-1180	30	Հայրապետյան Ռուզաննա	1950թ.	AA 0682279, տրված 21.03.1997թ., 016-ի կողմից	3	2
			Գրիգորյան Նաիրա	1974թ.	AB 0617089, տրված 21.11.1997թ., 016-ի կողմից		
			Գրիգորյան Քրիստինա Միերի	1996թ.	ԱԱ N133303		

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված՝ ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները չբարելավված անձանց (ընտանիքների) միասնական ցուցակը հաստատելու մասին» N290 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 378-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

378	3ս-1180	30	Հայրապետյան Ռուզաննա	1950թ.	AA 0682279, տրված 21.03.1997թ., 016-ի կողմից	3	2	26.11.2013թ., N363
			Գրիգորյան Նաիրա	1974թ.	AB 0617089, տրված 21.11.1997թ., 016-ի կողմից			
			Գրիգորյան Քրիստինա Մհերի	1996թ.	ԱԱ N133303			

Նախարար՝

Նարեկ Սարգսյան

Իսկականի հետ ճիշտ է

